ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N04 -Ա

« 05 » ՀՈՒՆՎԱՐԻ 2026Թ.

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ և 39–րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 11-ին կայացած նիստի թիվ 508 արձանագրությունը, 2024 թվականի ապրիլի 22-ի Փառանձեմ Մկրտչյանի հետ կնքած №22 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը և Փառանձեմ Մկրտչյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փառանձեմ Սամսոնի Մկրտչյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Աշխատանքը սկսել 2026 թվականի հունվարի 7-ից:
2. Լուծել Փառանձեմ Մկրտչյանի հետ 2024 թվականի ապրիլի 22-ին կնքած №22 ժամկետային աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքի վերջին օրը համարել 2026 թվականի հունվարի 5-ը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք. Եղեգնաձոր